Փունջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

Տարեկան բաժանորդագինն է երկու եւ կէս արծաթ Մէճիտ կանխիկ վճարելի, թէ՛ մայրաքաղաքիս եւ իւր արուարձանաց եւ թէ՛ գաւառաց համար։

Վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

Հատը 40 փարայ է, եւ կը գտնուի մասնաւորապէս Պանճէ-Պաշըս ջրավաճառ եւ գրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղայից խանութներըը։

ՓՈՒՆՋ

Ծանուցման տողը 3 դուրուշ է մեկ անգամի համար։ Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար։

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի առ. Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան Կ. Պոլիս Պալըգ-բազար Նաֆիէ խան վերի յարկ թիւ 16։

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Arménien Pountch
—16 Nafié-Han, Balouk-Pazar 16—
CONSTANTINOPLE

Թիւ 2261 — ՇԱԲԱԹ — 1891 ՅՈՒՆԻՍ 29

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՋԻ

Եէտիգուլէի Հիւանդանոցն

գնացինք երկու շաբաթ յառաջ իմա Բրիստոտուր էֆէնտիի Ղազարոսեան, որ՝ ինչպէս յայտնի է, հիւանդացած և ազգային հնանոց կարօտ լինելով՝ պառկած է անդ, և մասնաւոր խնամք ու հոգածութիւն կայ իրեն համար՝ բատ յանձնարարութեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

Մեր նորահաս պատանեկութեան, մեր որբութեան պատսպարանն եղող ազգային այս Տունն՝ շնորհիւ առատաձեռնութեան ազնուագութ անձանց, մեծ մասամբ գեղեցիկ և քաղաքակիրթ վերափոխեալ տեսնելով՝ գոհ և ուրախ եղանք. օրհնեցինք նուիրատուներն, օրհնեցինք աշխատաւորներն, և քանիցս շնորհակալութեան ձայն բարձրացուցինք ազնիւ Հոգաբարձութեան և Նորա ժանդակ մասնախմբի ջանից և անձնուիրութեան համար։ Տեսանք նոյն օրը մասնախմբին մեծարգոյ անդամներն, որք ամէն յարկ կը շրջէին կը քննէին, և պատսպարեալ հիւանդաց, անկելոց, որբոց և այլոց հանգստեան համար կարգադրութիւններ կընէին։ Խմացանք թէ գրեթէ երկու օրն անգամ մը 5-6 ժամ Հիւանդանոցի մէջ կանցունեն և կարևոր տնօրինութիւններ կընեն։ Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն շա՛տ լաւ խորհեր է այսպիսի մասնախմբի մը պէտքն՝ ներքին վարչութեան բարւոքման համար։

Սակայն չեմք ուզեր որ մեր այս տողերէն մակաբերուի թէ՝ Եէտիգուլէի Հիւանդանոցը կատարեալ հաստատութիւն մ'է այժմ, և ո՛ր և է կարօտութիւն չունի։ Ո՛չ, ո՛չ. պէտք է գիտնալ որ վերաշինութեան գործն ամբողջացած չէ. տակաւին կարևոր յարկեր կան շինուելիք. գեթ 15000 լիրա պէտք է ամբողջացնելու համար. Հետևաբար ամէն Հայոց և մանաւանդ ամէն ձեռնհաս Հայոց նուիրական պարտ է նպաստել յօժարակամ, որպէս զի վերաշինութեան ընդհատեալ գործն շարունակուի և լրանայ։ Նորակառոյց յարկաց շուրջն աւերակաց կոյտեր բարձրացած են։ Նորանոր նպաստներ պէտք են այդ կոյտերն թափելու, և կարևոր յարկերն կառուցանելու համար։

Նաև՝ չեմք ուզեր որ մեր յիշեալ տողերէն մակաբերուի թէ պատսպարելոց ամէն պիտոյքն լիուլի կը տրուի և ո՛ր և է կարօտութեան մէջ չեն գտնուիր նոքա։ Ո՛չ, ո՛չ, աւելի հասոյթ, աւելի դրամ պէտք է ամէն կողմի պատսպարելոց ամէն տեսակ պիտոյքն բատ արժանւոյն հոգալու մատակարարելու համար։

Վերջապէս չեմք կրնար ըսել թէ Եէտիգուլէի Հիւանդանոցն, Թուրքիոյ միլիոնաւոր Հայոց միակ Պատսպարանն՝ բոլորովին ճոխ և գոհացուցիչ վիճակի մէջ կը գտնուի։ Պարտ կը համարիմք մեզ հրաւէր կարդալ առ ամենայն ազգայինս, — ամէն աստիճանի և կարգի — որ գիտուն, որ օգնեն, որ նպաստեն, որ միշտ յիշեն թէ այդ Պատսպարանի խնամոց կարօտացած են նաև՝ երբեմն իբրև հանճարաւոր, իբրև մեծատուն, և իբրև պերճափառ համբաւեալ անձինք։ . . . .

Թղթակցութիւն Փունջի

Ամասիա. 18 Յունիս 1891։ — Բաղաքիս մէջ այս օրեր կազմուեցաւ մի շահաստիրական ընկերութիւն Շիրինի Վարանիչ անուամբ 400 բաժնի վրայ. իւրաքանչիւր բաժնորդագինն է ամսական մէկ արծաթ մէճիտ։ Այս դրամ 5 տարի շարունակ վճարուելով պիտի գոյանայ 24 հազար մէճիտ. Ընկերութեան 20 անդամներէն բաղկացեալ Տնօրէն ժողովն կազմուեցաւ հետևեալ անձերէ. Ղրմանը զադէ Հաճի Մէհէմմէտ էֆ. Արիֆաճիզադէ Հաճի Օսման էֆ. Նիշզպաշը Թեամիլ էֆ. Նուֆուս քեաթիպի Ալի էֆ. Մուհասէպէ քեաթիպի Համտի պէյ, Շիրվանիզադէ Ապտիւլրահման էֆ. Հաճի Նէչէթ էֆ. Ճըլըզըզզադէ Ահմէտ էֆ. Սարաֆ Ապտուլլահ էֆ. Կէօլիւքյօղլու Ահմէտ էֆ. Իփրանոսեան Մարուգէ էֆ. Գայեան Յարութիւն էֆ. Փափազեան Կարապետ էֆ. Սիմոնեան Յակոբ էֆ. Նիկողոսեան Միքայէլ էֆ. Արսլանեան Խաչիկ էֆ. Ճէմէկեան Յակոբ էֆ. Թուլումպաճեան Գէորգ էֆ. Փափազեան Յարեթնագուլ էֆ. Ավրամիտօս Պանտիլի էֆ։ Սոյս պաշտօնը պիտի անէ 2 տարի և վերընտրելի են։ Տնօրէն ժողովը պիտի ընտրէ նաև 7 անձերէ Գործադիր ժողով մը, գանձապետ, համարակալ, դիւանադպիր, հաւաքչէ և այլն, բաղկացեալ, որք ամսական պիտի ըստանան, և ինչ գործառնութիւն որ օգտակար կը համարին պիտի ընեն յօգուտ և ի շահ ընկերութեան։ Հինգերորդ տարիէն բոլորելով շահերն պիտի վճարուին անդամոց։ Իսկ 10րդ տարին ընկերութիւնը պիտի լուծուի։ Այժմէն սրճարան մը վարձած են 3 տարւոյ համար, տարեկան 25 լիրայ վարձքով, որուն մէջ պիտի ըլլայ ընթերցատուն մը և հիւրանոց մը։ Անդամք պարտաւոր են նոյն սրճարանն յաճախել, և հեռաձայնէ յանուն ընկերութեան բացուելիք վաճառատուններէն առնուտ ընել։ = Նահանգիս կուսակալ Վսեմ. Մէմտուհ պէյ, երկու օր առաջ Նըդոկիայէ այսր ժամանելով՝ այս առաւօտ մեկնեցաւ ի Լատիկ։ Անտի Հավզայ և Մարզուան այցելելէ վերջ պիտի վերադառնայ քաղաքս։

Բարկէն

Մարզուան. 11 Յունիս 1891։ - Տէրունական ուխտաւորք. - Մահ 110 ամեայ ծերունւոյ. - Վիճակ հնձոց։ - Մարզուանցին՝ որպէս կրօնական բոլոր զգացմանց նոյնպէս և ուխտագնացութեան մասին չթերանար իւր պարտաւորութեանց մէջ. ամէն տարի կունենայ բազմաթիւ ուխտաւոր թէ՛ ի Երուսաղէմ և թէ՛ ի Կեսարիա ի վանս Ս. Կարապետի։ Ամէն դասակարգի մանաւանդ միջին և աղքատիկ դասու ազգայինք, ի կատարումն իւրեանց խնդրուածոց, որք քրտնաթոր ջանից, և կանայք կկոցի անդուլ երթևեկութեանց գոյացած աննշան վաստակոց մի մասն ամ բստ ամէ խնայելով, կը գիղեն գումար մը, և կուխտեն երթալ ի համբոյր և յերկրպագութիւն այն սրբավայրից, ուր Փրկչին մեր բոլորեց իւր 33 ամեայ հրաշալի շրջանն. այո՛, կուխտեն երթալ թանալ ջերմ արտասուօք այն շնաշխարհիկ վայրերն, որոց աննշան լեռն ու դաշտ, քարն ու հող, ձորն ու փոր, ծակն ու ծմակ լի են բիւրաւոր պաշտելի յիշատակօք, և կուգան նկարագրել, եթէ կարելի է մարդուն տկար լեզուաւն, այն անհուն բաղձանքներուց պտղատու մանրանկարներն, յորդորելով զունկնդիրս, որ չըրկումն այնքան անմահ վայրեր տեսնելէ, որով այսօր Մարզուանցւոյն 1/5 ը մահտեսի լինելու բաղդին արժանացած է։ Ուխտաւորաց մեկնումն և վերադարձը շատ շքեղ կը կատարի. նոր Մահտեսիաց ազգականք և պարագայք, շաբաթ մ'առաջ դիմաւորելու երթան ի Հավզայ, որ՝ քաղաքէս 4 ժամ հեռի՝ փայլուն ապագայ խոստացող աւան մ'է նշանաւոր ջերմուկով. անդանոր իւրեանց ժամանակը կանցունեն խայտանօք և խրախճանօք, ունկնդրելով սքանչելեաց Ս. Բաղաքի և երբեմնակի փառաց անբաւ զօրութեամբ պատրաստեալ ջերմուկի ջրերն յուղելով, վերադարձի որոշեալ օրը լուր կը տրուի քաղաքացւոց, և ահա հեռաւոր ու մերձաւոր ազգականք գունդագունդ կը գիմեն Փէհլիվան անուանեալ կանաչազարդ դաշտն, զոր կը հովանաւորէն բարձրաբերձ բարտիներու և կաղամախեաց սաղարթադեղ ստուերք. անդանոր տեսնելու է կարաքաշ ձերունեաց կարօտի արցունքն, պարթևահասակ երիտասարդաց հրճուանաց աւիւնն, անհող մանկանց զուարթ կայտառութիւնն. որք կերգեն, կանայք կը շատախօսեն. ոմանք կը պարեն և այլք Բագոսի տաճարին կը խնկարկեն. և երբ ի հեռուստ երևեցան ժամերգութեան դանդակի քաղցրաձայն զօղանջիւնն լսուի, ամէն ոք կը փութայ անդամակցել կանխապատրաստ բաղմամբոխ գեղեցիկ թափորին, որ քահանայից դասու և երգեցիկ մանկանց առաջնորդութեամբ կը բերուի յեկեղեցի, ուր յետ կատարելոյ արարողութեան Ողջունմայի, կը դառնան ի տուն իւրեանց յետ երկարժամանակեայ ըղձալի բացակայութեան։ Այս տարուան Տէրունական Ուխտաւորաց թիւը 24 ի կը հասնէր, որոց 11 ը արանց և 13 ը կանանց սեռէն կը բաղկանային։ Ասոնմէ սմօրութիւն կայ ի յիշատակ ուխտագնացութեան մէկ մէկ ընծայ բերել ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ. պարծանօք կը յիշեմ այս տարւոյ պատուարժան նուիրատուաց անուանքն, որք զանազան ընծայիւք պատուեցին իւրեանց եկեղեցին. Մ. Յակոբ էֆէնտի Խրիմեան՝ մէկ ձեռք Պատարագի ծանրագին զգեստ. Մ. Յովհաննէս էֆէնտի Թէփիկեան՝ մէկ հատ գեղեցկաձոյլ արծաթեայ դաւազան. Մ. Թորոս էֆէնտի Տինկինեան՝ 40 հատ ոսկեզօծ կանթեղ. Մ. Յովհաննէս էֆէնտի Ղըտրըշեան՝ երջանկայիշատակ Յակոբոս Պատրիարքի իւղաներկ պատկերն, այն մեծ մարդուն և անմահ բարերարին, որ իւր բազմաթիւ յիշատակներովն օծեալ ու սրբեալ, համայն ազգին ի մասնաւորի Մարզուանցւոյն սրտերն համակ գրաւած է երախտագիտական ջերմ զգացմամբ. ամէն ոք սքանչանօք և արտասուս յաչս կը դիտէ անյագօրէն իւր հոյակապ եկեղեցւոյ հեզիկ հիմնադրին գեղեցիկ նկարն։ = Անցեալներըը մեռաւ բարի և կրօնասէր ծերունի մը ի հասակի 110 ամաց. սա մինչև իւր յետին ժամն կը կրէր մտային և ֆիզիքական բոլոր կարողութիւններն. զարմանալեաց կարդէն լինելով՝ հետևեալ օր ալ վախճանեցաւ իւր հոգեհատոր ամուսինն ի հասակի 90 ամաց։ Բստ պատմելոյ դրացեաց և նոյն իսկ ծխատէր քահանայի՝ սոյն երկու ամոլք յանհօւն կը սիրէին զիրեարկ. կինը երկար ժամանակէ հետէ անկողնոյ կը ծառայէր. հեզահոգի այրը՝ ոչ զոք ունենալով օգնական, բոլոր տնային ծառայութիւնն կամակար կը կատարէր. ամէն 40 օրն անգամ մը Ս. Հաղորդութիւն կառնուն եղեր. և զոգցես սոքա չկամելով մեկուսի կենակցել ի միմեանց, միասին չուեցին ի հանդերձեալ խաղաղութեան։ Երթա՛յք հանգերու՛ք ո՛վ ամոլք սիրասունք ի հանգիստ յաւիտենական. դուք, թէպէտ ապրեցաք ի վիճակ աղքատիկ, սակայն չուառութիւնք աշխարհի չկարողացան երբէք մեղկել զյօդամանութեան ձերոյ։ Թո՛ղ օրինակ առնուն ի ձէնջ ամէն նոյ ամուսինք։ = Վերջին նամակս ի վեր յորդառատ անձրևք կանոնաւորապէս ոռոգեցին մեր ընդարձակ արտորայսն, ի մեծ գոհունակութիւն համայն ժողովրդեան, մանաւանդ ժրաջան երկրագործին, որոյ միամեայ քրտնաթոր աշխատութիւնք պսակեցան։ Թէպէտև շրջակայ արուարձանաց հնձոց ոչ այնչափ օգտակար, սակայն լեռնային դաշտերու համար խիստ մեծ բարիք մ'էր. արմտեաց գիներն իջած և իրենց նախկին վիճակն առին. այժմ ցորենին գինը (12 օխա) 6-8, իսկ գարիին լիբը 3 1/2-6 ղրուշի կը վաճառուի առ հասարակ։

Մ. Բ. Ասիլեպեան

Եղեսիա. 8 Յունիս 1891։ - Եթէ նիւթական կեանքն ապահովեալ ժողովրդեան մը պարագ սկսուած է ընդ միջոյ հոգի հոգերովը զբաղիլ, ինչ պէտք է ըսել այն ժողովուրդն՝ որոյ նիւթական կեանքի խարիսխն աննշան գիպուածէ մը կը սարսի, և փոքր պատահար մը նորա կենաց տարերքն անդոյութեան կը մատնէ։ Ինչ պարտի ընել ժողովուրդ մը՝ երբ իւր մէջ գէթ ժամանակի մը համար պահեստի նիւթական զօրութիւն չունի, մանաւանդ օդոյ և տարերաց ընթացքէն կը ըղխին իւր թշուառութիւն և երջանկութիւն։ Հարկէն ստիպեալ միշտ իւր անստոյգ ներկային և անապահով ապագային մտատանջութեամբը պիտի տառապի։ Անստուգութիւն - սրտի այս հոգեվարքը շատ անգամ երիտասարդացեալ կը ծերացնէ զկայտառապատանին, և երիտասարդին կենաց առաւօտն երեկոյի կը փոխէ։ Երաշտ աշուն մը, ձմեռ զարուն մը անստուգութեան մատնեցին զԵդեսիա։ Ապրիլ ամիսն իւր առատ անձրևներով երկիրը ոռոգել զլացաւ, թիթուրին կեանք մատակարարեց. թիթուրն՝ որ թանկոց այդ ժանտախտն՝ խաղողի, այգեստանեաց Ապրիլները Դեկտեմբերի փոխեց. այդեգործ ազքատաց տարեկան հացն յափշտակելով յուսահատութեան մատնեց զայնս։ Թիթուրն զինաթափ չեղած՝ Խառանի հեռաւոր վայրերէն դէպ յԵդեսիա մարախի արշաւանաց դուժն սարսափ դրաւ ժողովրդեան սրտին մէջ. ցորենը իւր սովորական գնոյն կրկինը բարձրացաւ սուղ ժամանակի մէջ. մարախը լափեց նահապետական դաշտի մարդահասակ ցանքերն. փշրանքն և եթ մնաց դժբաղդաբար երկրագործին բաժին։ Զառակաց գերեզմանին վերայ առ-

տասուոզ հարց պէս՝ լացին ալևոր երկրագործք իրենց յոյսերու ի դերև ելնելը, զօրութեան տկարանալը, վարկի կործանումը նախատեսելով. երիտասարդք՝ իրենց միամեայ քրտնաթաթ աշխատութեանց մի քանի վայրկեանի մէջ մարախին ճարակ լինելը տեսնելով՝ հառաչեցին. օրիորդք՝ ի նշան սգոյ, իրենց թուխ մազերու պուրակներուն մկրատը դահիճ ընտրեցին, վասն զի մարախը հարսանեաց օրերնին յետաձգած էր, ո՛վ գիտէ՝ մինչև քանի՞ տարի։ Մարախին հասաւ պարիսպներուն տակ. խուժեց քաղաքին մէջ. նօթի չանց վոհմակներու պէս մարդկան վրայ կը յարձակին. մարախը կուտէ կը գերփէ, և իւր ապագայ գոյութեան հունտն կը ձգէ քաղաքին շուրջը։ = Ապրիլի երաշտէն հիւանդացած ցանքերն Մայիսի առաջին երկու եօթնեակներու մէջ տեղացած անձրևոց շնորհիւ ապաքինութիւն գտան։ Մայիս ամիսը անձրևին պարգևին հետ կարկուտի պատիժն ալ ունեցաւ։ Ի մէջ այլոց Պիրէճիկ (վիճակ Եդեսիոյ՝ Եփրատի ափանց վերայ) քառորդ ժամ օճառի կաղապարի ձևով 100-120 տրամի ծանրութեամբ տեղացած կարկուտէն ու անձրևէն գոյացած հեղեղներու հոսանքները քանի մը տուն քանդած՝ կամ կարասիքն Եփրատի տուած են. թէ՛ փլատակաց ներքև մնացող և թէ՛ հոսանքներէն մղուելով Եփրատի ալիքներուն տակ կորուսեալ անձանց թիւն 5 է, կըսեն։ Ծառեր, տունկեր անդարմանելի կերպով ջնասուած են կարկուտի խոշոր գնտակներէն. այդ փոքրիկ քաղաքի մէջ եղած ջնասը 1000 լիրայ կը հաշուեն, բաց ի քանդեալ տուներէն։ Պիրէճիկի արուարձանաց մէջ բաւական թուով ոչխար ու արջառոց հօտերու կորուստ կայ, որք հոսանքներու բռնութենէն մղուելով Եփրատի մէջ թափած են. դեռ ստոյգ թիւը չգրեցին մեզ։ = Պիրէճիկի Ազգայինք զգալով տեղւոյն վարժարանին երկար ժամանակէ ի վեր գոց մնալուն տրխուր հետևանքը, նախորդ ամսոյ մէջ տեղւոյս երիտասարդներէն Պ. Կարապետ Թորոս էֆէնտին դասատուութեան պաշտօնով կանչեցին. եթէ իրենց դասատուին յարգը գիտնալ սիրեն և յարատևեն, արդիւնքն կը վայելեն անշուշտ։ Ցանուն դաստիարակութեան՝ իրենց աղքատիկ քսակէն տարեկան նը պաստ մը նուիրող գործաւոր երիտասարդք Պիրէճիկի Հայ մանկըտւոյն մեծ բարերարներն պիտի լինին, եթէ շարունակեն արդի փափաքնին։ Յաջողութիւն մաղթելով՝ արդիւնաւոր վախճանը տեսնել կը փափաքիմք։ = Եդեսիոյ արտածեալ ապրանաց կարգին մէջ մեծ տեղ մը կը գրաւէ բուրդի առուտուրը։ Տեղացիք՝ օտար երկրի հետ յարաբերութեան միջոցներ չունենալնուն պատճառաւ ուրիշ կարևոր առևտրական գործոց հետ բուրդին մեծ առուտուրն ևս Բերիացի պապական և հրէայ վաճառականք սեփհականած են, որոնք ներկայիս մէջ անցեալին պէս չյաջողեցան գործել բուրդի առուտուրը, որովհետև նախորդ ամսոյ մէջ այսր ժամանեց Ազնը-ուսափայլ Կիւլպէնկեան Մ. Յովհաննէս էֆէնտի, և այժմ բուրդի առուտուրով և եթ կըզբաղի։ Քաղաքիս կարևոր շահերովը ըզբաղեալ վաճառականք երբ ականատես կը լինին Յովհաննէս էֆէնտիի արիութեան, գործունէութեան, անկեղծութեան, ուղղութեան և արդարասիրութեան, նախանձու և զմայլման յուզումները կունենան. կը նախանձին Յովհաննէս էֆէնտիի գործոց ընդարձակութեան վերայ. կըզմայլին նորա գործունէութեան վերայ, որովհետև՝ առանց օտարին կամայ վստահելու՝ ամէն գործ իւր տեսութեան հսկողութեան ենթարկեալ են։ Մեք Կիւլպէնկեան մեծանուն գերդաստանի այդ ազնիւ շառաւիղին գործերը Մալաթիոյ մէջ տեսած ենք. գիտենք, կը ճանաչենք զինքն և գործերն։ Նորին ազնուութեան նշանաբանք են արդարութիւն, արութիւն, ճշդապահութիւն, ուղղութիւն։ Բաղդաւոր է Եդեսիա, եթէ Մ. Յովհաննէս էֆէնտի մնայուն ճիւղ մը հաստատէ ասա։ = Քաղաքական նախորդ յոյն բժիշկի յաջորդն Այնթէպցի Պէզճեան Տոք. Յովսէփ էֆէնտի ժամանեց այսր անցեալ շաբաթ։ Յովսէփ էֆէնտի բժշկութիւնն ուսած է Այնթէպի Գոլէճին մէջ. շուրջ երեք տարի յԱմերիկա նոյն ճիւղն մըշակած, և ի Կ. Պոլիս վաւերացուցած է իւր կրկին վկայագրերն։ Տոք. Յովսէփի անձնուիրութիւնը ճանչցողներ վստահութեամբ կըխօսին նորա ճարտարութեան և մարդասիրութեան վերայ։ Կը սիրենք յուսալ թէ աղքատիկ հիւանդներ պիտի վայելեն ազնիւ Տոգթորի արգահատանքն և խրնամքը։ Սարգիս Ս. Յակոբեան

Էլէվի (Տրապիզոնի վիճակ) 8 Յունիս 1891։ — Տարւոյս Ապրիլ 6 թիւ լրագրոյդ մէջ գիւղիս վերայ գրուած յօդուածի մը մէջ ուղղելի կէտեր կը գտնուին։ Էլէվի Տրապիզոնէն 18 ժամու ճանապարհ հեռաւորութիւն ունի, ո՛չ թէ 6-7 ժամու. գիւղիս Հայք 30-35 ընտանիքներէ կը բաղկանան, ո՛չ թէ 60-70. կրօնասէր և միանգամայն ուսումնասէր են, և ո՛չ թէ անոնցմէ զուրկ. կը ջանան միշտ իւրեանց եկեղեցին և դըպրոցն պայծառ պահել, ո՛չ թէ գոց կը պահեն զայնս. ցարդ իրենց պահած քահանաներուն և դասատուներուն աշխատութեանց վարձքը լիովին վճարած և իրենցմէ գոհունակութիւն ընդունած են, և ո՛չ թէ կարօտ ու թշուառ դարձուցած են զանոնք։ Տ. Դարեգին քահանայն ալ պահած են և շարունակ 3 տարի ո՛չ թէ մէկ տարի, և յիշեալ քահանայի աշխատութեան վարձն ալ լիովին վճարուած ու ինքը գոհութեամբ վերադարձած է ի Տրապիզոն, ո՛չ թէ կարօտ ու թշուառ լինելով։ Դժուար կը թուի մեզ հաւատալ թէ Տ. Դարեգին քահանայն պիտի մոռնայ ըստ պայմանի և ըստ խոստման ընդունած վայելքներն։ Արդարև քանի մը ամիսներէ ի վեր Էլէվիի եկեղեցին առանց քահանայի կը մնայ, բայց պատճառը յատուկ քահանայ չունենալն է. ի Տրապիզոն առ կրօնական ժողովն գրուած ու քահանայ ուղուած էր. ժողովն ալ խոստացած էր ղրկել, բայց չյաջողեցան. իսկ դպրոցը միշտ և ցարդ շարունակութեան մէջ է շնորհիւ Էլէվիի ազգայնոց ուսումնասիրութեան։ Յոյս ունիմք որ նորակազմ թաղական խորհուրդը նոր եռանդեամբ պիտի փութայ մեծ ժամանակի մէջ ունենալ արժանաւոր քահանայ մը, որ հարկ և անհրաժեշտ է։ Ա. Դ. Պոթիկեան

Կ. Պոլիս. 26 Յունիս 1891։ — Նուիրական պարտաւորութիւն է արժանաւորը քաջալերել բանիկամ գործով։ Ի Փիրասոն տասամեայ բնակութեամբ՝ կատարելապէս ճանչցայ տեղացիքը, ուսումնասիրեցի նոցա կեանք, գործ ու բնաւորութիւն։ Պատիւ ունեցայ նաև ճանչնալու քաղաքին դաւառապետ զվսեմաշուք Պէքիր փաշա, որոյ իմաստուն քաղաքագիտութեան, կորովի ու կարուկ ընթացից շնորհիւ Փիրասոն քաղաքը՝ իւր եռաղդի ժողովրդովք կատարեալ հանդարտութեան մէջ է. ամեն ոք խաղաղ ու անդորր իւր գործով կըզբաղի, օրհնելով զմեր Կայսրն Օգոստափառ, զի՝ նորին Վեհափառութեան նախատես հոգածութեան շնորհիւ՝ հետզհետէ խոհական և լուսամիտ կառավարչաց կը յանձնուին ժողովուրդները խնամելու փափուկ ու նուիրական պաշտօնը։ Արժան է որ լաւ ճանչցուի ու քաջալերուի Փիրասոնի վսեմաշուք դաւառապետ Պէքիր փաշա, որ տէրութեան ու երկրին յոյժ օգտակար անձնաւորութիւն մ'է։ — Նոյնպէս ի Փիրասոն մերազգիներէն Մեծ. Մատթէոս էֆէնտի Թոգաթլեան՝ կառավարութեան ու հասարակութեան օգտակար, անձնուէր ու գործունեայ անձ մ'է։ Մատթէոս էֆէնտի Թոգաթլեանի՝ թէ՛ ի նպաստ երկրին և թէ՛ յանկեղծ ծառայութիւն առ կառավարութիւնն՝ ցոյց տուած ջանքերն ու գործերն ամէն ոք գիտէ և կը վկայէ. ուստի կարժէ որ բարեխնամ կառավարութիւնն քաղցր ակնարկով մը վարձատրէ և քաջալերէ. և միթէ կարելի՞է մոռնալ ազնիւ և պատկառելի Ծերունին Մեծ. Գէորգ աղայ Մազմանեան, հիմնադիրն Փիրասոնայ ուսումնասիրութեան, դպրոցասիրութեան և ընթերցասիրութեան։ Սոյն յարգելի ալևորը՝ ի՞նչ որ էր իւր եռանդնոտ հասակին մէջ, նոյնն է նաև այժմիկ։ Ամբ ժամանակաց ճնշեր ու ճզմեր են նորա մարմինն, բայց կը թուի թէ՝ չեն կարողացեր մտքիլ ու հպիլ նորա հոգւոյն ու մտաւոր կարողութեանց։ Կարժէ որ Փիրասոնցիք այս բարի ծերունւոյն տօնախմբութեան յորելեան մը սահմանեն։ Այո՛, բանիւ և արդեամբք պարտինք վարձատրել պետութեան ու ազգին անձնուէր աշխատաւորներն՝ որ մարդկութեան օգտակար անդամներն են։ Պիտի գրեմ յառաջիկային Փիրասոնայ նիւթական ու բարոյական հանգամանաց վերայ։ Տիգրան Փափազեան

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգային ժողովն երեկ նիստ ըրաւ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, ատենապետութեամբ Վսեմ. Յովհաննէս էֆէնտիի Նուրեան, ի ներկայութեան մեծագոյն մասին եկեղեցական և աշխարհական երեսփոխանաց։

Արդիւնքն եղաւ հետևեալն։

1. — Մայրաքաղաքիս քանի մը թաղերու մէջ կատարուած երեսփոխանական նոր ընտրութեանց տեղեկագիրք կարդացուեցան, ընտրութեանց օրինաւորութիւնը վաւերացաւ և երեսփոխան հռչակեցան հետևեալ պատուարժան անձինք.

Գումգափուէն՝

Տիգրան էֆէնտի Եուսուֆեան
Յարութիւն « Մոստիչեան
Եղիազար « Մելիքեան

Նարլըգափուէն՝

Բարսեղ էֆէնտի Ստամպոլչեան
Իսկիւտարէն՝

Կարապետ էֆէնտի Սրվանձեան
Միհրան « Սեթեան
Նշան « Ծիվանեան

Գուզկունճուգ - Իճատիյէ

Դանտիլլիէ՝

Տոգթոր Սեղբոսեան էֆէնտի
Մկրտիչ էֆէնտի Մէղպուրեան

2. — Ազգային կեդրոնական վարչութեան Կրօնական և Քաղաքական ժողովոց երկամեայ պաշտօնավարութեան տեղեկագիրը մատուցեալ էր։ Զկարդացուեցաւ ժամավաճառ չլինելու համար, և որոշուեցաւ տպագրել և առաջիկայ նստէն յառաջ ղրկել առ երեսփոխանս, որպէս զի կանխաւ կարդան և սերտեն։

3. — Մատուցեալ էր նաև Պատրիարքարանի մնացուկի երկու նախընթաց տարիներու հաշուեցոյցն։ Յանձնաժողով մը ընտրեցաւ առ ի նախաքննութիւն սոյն հաշուեցուցի։

4. — Կարգը դալով Կրօնական և Քաղաքական ժողովոց ընտրութեան, երեսփոխանաց ոմանք դիտելով որ Քաղաքական ժողովն ճիշդ երկու տարի պաշտօն վարած չէ, առաջարկեցին որ ժամանակ մը, կա՛մ կէս և կա՛մ մէկ տարի ալ պաշտօն վարէ, սակայն ժողովը նկատելով որ սահմանադրութեան տրամադրութիւնն բացորոշ է, որոշեց նոր ընտրութիւն կատարել, և որովհետև նստին փակման որոշեալ ժամն՝ 9, հասած էր, ընտրութեան գործը ձգեց առաջիկայ նստին, որ երկու շաբաթէն տեղի պիտի ունենայ, և մինչև նոյն օրը եկեղեցական Համագումար ժողովն ըստ օրինի պիտի պատրաստէ Կրօնական ժողովոյ համար ընտրելեաց ցանկն։

* * *

Ազգային ժողովոյ երեկի նստի արդիւնքն այսչափ չէ։ Քաղաքական ժողովոյ մէկ տեղեկագրին վերայ, երեսփոխանաց մեծ մասն վճռեցին որ երեսփոխաններէն Սուրէնեան Աւետիս էֆէնտի ազգային ժողովոյ մէջ աթոռ չունենայ և ազգային ուրիշ պաշտօններ ալ չվարէ մինչև ցնոր տնօրինութիւն։ Այս վճիռն գործադրուեցաւ։ Սուրէնեան արտաքսեցաւ։

Վախճանեալ Միսակեան Խաչատուր էֆէնտիի սենեակն՝ որ փակուած կնքուած էր Իւսկիւտարի Սէլամիէի թաղական խորհրդոյ կողմանէ և մահուանէն հետէ կը մնար փակեալ, բացուեցաւ այս շաբաթու։ Սենեակին մէջ գտնուեր են 150 օսմանեան ոսկի, 20000 դրչի թղթադրամ օսմանեան, 500 ֆրանքի գաղղիական դրամատոմս մը և պղինձ ու արծաթի դրամներ։ Ապշեցանք լսելով զայս, որովհետև կը կարծէինք թէ Միսակեան էֆէնտի նիւթական ամենատանջուկ վիճակի մէջ կը տառապի, և իւր հանդերձից պատառուն և աղտեղի կերպարանքն գլխաւորաբար այդ վիճակին հետևանքն է։ Միսակեան Խաչատուր էֆէնտիի դէմ, յետմահուանն, անգթաբար դրոշներու թիւն ստուարացուցեալ հաճոյ չէ մեզ, որովհետև Փարիզէ վերադարձէն հետէ յաճախ կը տեսակցէինք իւր հետ, մեծ համարում ունէինք առ նա առ իբրև քաջ հայազէտ, ճարտար բանաստեղծ և պատմագէտ ու հնագէտ և առ իբրև խոհուն անձն, և անդրդուելի կը մնամք մեր այս համարման մէջ։ Միայն կը ցաւիմք և չա՛տ կը ցաւիմք արդ որ այսպիսի անձ մը մաքրասիրութեան, և հանդերձից վայելչութեան անհրաժեշտ պէտքն բնաւ չէ ըմբռներ, և կծծութեան դժպհի մոլութիւնն կրցեր է յաղթահարել զինքն։ Միսակեան էֆէնտի ժառանգորդ ունի քեռորդիներ. հետևարար նոքա կըստանան գրտնուած գանձն, ինչպէս նաև գիրքերն, որ քանի մը հարիւր կտոր են։ Կը լսեմք թէ կարևոր ձեռագրեր գտնուած չեն։

— Երուսաղէմայ Միաբան Արժ. Տ. Գէորգ վարդապետ Երէցեան՝ որ ի Ռումանիա-Պուլղարիա այցելութեան և հանգանակութեան պաշտօնները կատարելով վերադարձած է ի Կ. Պոլիս, պիտի երթայ իւր ծննդավայր քաղաքն Խոմայիլ և ամսէ մը ետքը ուղևորի յԵրուսաղէմ։

— Տ. Ղևոնդ վարդապետ Փիրզալէմեան, բնիկ Վանեցի, իւր գրական և հնախուզական կարեւոր աշխատութեամբ բաղմաճանօթ, երկու շաբաթ յառաջ վախճանեցաւ Երուսաղէմայ մէջ, ուր կը գտնուէր ժամանակէ մը հետէ, և վերջին օրերս հիւանդացած էր։

— Պալըքէսիրի Առաջնորդ Գեր. Տ. Տիմոթէոս Սրբազան ամսոյս 17 ին Պալըքէսիրէ ելաւ շրջագայիլ թեմերն և կարգադրել վիճակայնոց գործերն։ Ի Պալըքէսիր փոխանորդ կարգած է Բարունակեան Արժ. Տ. Նշան քահանայն։

— Հռոմէական ազգայնոց Եբրևելեաց Ընդհանուր ժողովն հրաւիրեալ էր ի նիստ անցեալ կիրակէ, բայց 60 անդամոց միայն 28 ը ներկայ գտնուելուն պատճառաւ ատեան չբացուեցաւ և յետաձգեցաւ վաղուան։ Ըստ օրինի՝ 31 անդամոց ներկայութիւնն անհրաժեշտ է ատեան բանալու համար։

— Հայրենիք լրագիրն՝ առաջիկայ ամսոյ 8 ի երկուշաբթի օրէն սկսեալ, պիտի հրատարակուի նոր խմբի մը կողմէ։ Պիտի երևի ամէն առաւօտ և ձեռքէ պիտի ծախուի հատը 10 փարայի։ Տնօրէնն է՝ Յովհաննէս էֆէնտի Շահնազար, իսկ խմբագրապետն՝ Արփիար էֆէնտի Արփիարեան։ Իրենց սիակցութիւնը

խոստացեր են՝ Ասատուր Հրանդ, Ջօհրապ Գրիգոր, Թէրզեան Թովմաս, Կամսարական Տիգրան, Կիւրճեան Հրանդ, Նորատունկեան Միհրդատ և Փանոսեան Աղէքսանդր էֆէնտիք ։ Պոլսոյ համար բաժանորդագրութիւն չպիտի ընդունուի ։ Գաւառներու համար բաժանորդագրութիւնն է, Թղթատարի ծախքը խմբագրութեան վրայ՝ կիրակի և տօն օրերը չըհաշուելով, տարեկան 300 թիւի համար 100 ղրուշ մէճիտ. – վեցամսեայ 150 թիւի համար 50 ղրուշ մէճիտ. – Եռամսեայ 75 թիւի համար 25 ղրուշ մէճիտ. – Տաճկաստանէ դուրս տարեկան 22 ֆրանք. վեցամսեայ՝ 11 ֆրանք ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական Սուլթանիյէ վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսը կատարուեցաւ հինգշաբթի ի ներկայութեան մեծ եպարքոսի, կրթական նախարարի, բարձրաստիճան պաշտօնակալաց և այլոց, Սոյն վարժարանի շրջանաւարտք 11 են այս տարի, յորս է մեր ազգայիններէն Յակոբ էֆէնտի Օրպէլեան ։

— Կայսերական պալատան ճարտարապետ Պալեան Սարգիս պէյի հին հաշուոց քննութեան համար քանի մը շաբաթ յառաջ կարգուած յանձնաժողովը՝ լրացնելով քննութեան գործն՝ արդիւնքն տեղեկագրեր է առ որ անկ է ։

— Ծխախոտի Րէժիի վարչութեան ընդհանուր տնօրէն Պ. Օպուանօ ի Փարիզ օսմանեան Պանքայի տնօրէն կարգեցաւ ։ Պիտի երթայ ի նոր պաշտօնավայրն՝ յաջորդին ընտրութենէ ետքը ։

— Պարսկաստանի թէնպէքիի Րէժիի վարչութիւնն մայրաքաղաքիս գործակատարին միջոցաւ կը ծանուցանէ թէ՝ ի Կ. Պոլիս Րէժիի թէնպէքիի վաճառումն յանձնուեր է պարսիկ վաճառական Հաճի Հալիլ աղայի ։

— Ցունաց Ս. Պատրիարքը Մաքրի գիւղի բնակարանին մէջ առանձնացեալ է ։ Գրեր է առ Սինհոդն թէ այսուհետև պատրիարքական տեղապահ Նէքթարիոս էֆէնտի պիտի կարգադրէ մետրապոլիտներու հրաժարման և ընտրութեան խնդիրներն ալ ։

— Մայրաքաղաքիս պարսկական նախորդ դեսպան Միրզա Մօհսին Խանի Ֆովեզեբեայ ապարանքին (ի Սթէնիա) կարասեաց մեծ մասն աճրդով վաճառեցաւ 2000 լիրայի, և Մօհսին խան մնացորդին վաճառումն յետաձգեց ։ Շոգենաւակն գնեց գործաբանապետ Գավաֆեան էֆէնտի 190 լիրայի ։

— Մայրաքաղաքիս Թրամվայի վարչութիւնն մօտերս պիտի սկսի Թրամվայի գիծ շինել Էմին-Էօնիւէն Էյուպ և Սուլթան-Պայազիտէն Ետիրնէգափու ։

— Կառավարութեան մաքսային տարեկան հասոյթն, որ ցարդ միջին հաշուով 2 1/2 միլիոն լիրա է, նոր կարգադրութեանց շնորհիւ մինչև 5 միլիոն լիրա պիտի բարձրանայ ։

— Մայրաքաղաքիս անգղիական դեսպանին յանձնուած էր կարգադրել Իտալիոյ հպատակ Պ. Դոնզոնիայի և Պարսից կառավարութեան մէջ վերելած մաքսային վէճ մը ։ Արդ դեսպանն որոշած լինելով որ Պարսից կառավարութիւնն 78000 ֆրանք վճարէ իտալացւոյն, այդ գումարը վճարեց յիշեալ կառավարութիւնն ։

— Ոստիկանութիւնն իմանալով որ Իւսկիւտարի մէջ աւազակաց ընկերութիւն մը կազմուած կայ, պաշտօնեաներ զրկեր և յաջողեր է ձերբակալել ամենքն ալ ։ Ստուգուեր է թէ այս ընկերութեան անդամք են որ ժամանակէ մը հետէ Իւսկիւտարի մէջ եկեղեցիներէ և տուներէ գողութիւններ կ'ընեն ։

— Կիւրճեան Յովսէփ երեք տարի չլթայակապ բանտարկութեան դատապարտեցաւ՝ Գայմագամ Լօմէր պէյի (որոյ հետ Գաղատիայէն Կ. Պոլիս եկած էր) ախոռէն քանի մը կտոր բան գողնալուն համար ։

— Կ. Պոլիս Գամանտօ խանի մէջ սեղանաւոր Պ. Սթավրի 150 լիրա տուեր է Բանայօթ անուն սպասաւորին՝ Դալաթիա Պ. Բոլլիի տանելու համար, բայց սպասաւորն դրամն առեր փախեր է ։

— Կ. Պոլիս Հաճի Մէհմէտ անուն նպարավաճառ մը՝ թթենիի մը վրայ ելած ոստ կտրելու ատեն, ինկաւ գլուխը ջախջախեցաւ և մեռաւ ։

— Էմին անուն մարդ մը՝ որ եռամսեայ յղի կինը դանակոծած, նորա վիժման պատճառ եղած և փախած է, ի բացակայութեան եռամեայ չլթայակապ բանտարկութեան և ստացուածոյն գրաւման դատապարտեցաւ ։

— Գումգափու Խալիտ էֆէնտի անուն մարդ մը յանկարծ խելագարեր, քարով ծանրապէս վիրաւորեր է կինն ու եռամեայ աղջիկն, և դրացիք հազիւ յիմարանոց զրկեր են մարդը ։

— Ի Բերա կին մը երեք զաւակ ծնաւ, մէկը մեռեալ ։

— Նէտիգուլէի դուրսը պարտիզպան Նորկիի սպասաւոր Բէթրօ, 12 տարեկան, ինքզինքն թունաւորելով սպաններ է ։ Պատճառն յայտնի չէ դեռ ։

— Էրէնքէօյլիւ Ղալիպ մահուան դատապարտեցաւ, հաստատուելով թէ բազում ուղևորներ կողոպտած, զոմնս սպանած, և հօվիւ Մէհմէտն սպաննած է ։

— Սէլանիկի նամակատան աւանդից տեսուչ Աղիզ էֆէնտի՝ 53 ծրար աւանդ (45740 ղրշ) առեր փախեր է, բայց Զմիւռնիոյ մէջ բռնուեր է ։

— Կեսարիոյ մէջ երկու ամիս յառաջ տղայ մը ծնած էր գլուխը մարմինէն աւելի մեծ ։ Այս տղայն մինչև ցայսօր ողջ է, և գլուխն հետզհետէ կը մեծնայ ։

— Ադրիանուպոլսոյ մէջ Մէհմէտ անուն մարդ մը դանակով քրոջը վիզը կտրեր սպանններ է, քեռայրէն առնելիքն եղած մէկ լիրան չտալուն համար ։

— Զմիւռնիոյ հրէից երեսփոխք որոշեր են՝ այսուհետև Սինոդականին սնտուկէն պէտք եղածին չափ նպաստ տալ աղքատ հրէից և մուրացութեան առաջքն առնուլ, և քաղաքին հրէից զինուորական տուրքն, ինչպէս նաև ճանապարհաց շինութեան աշխատութեան փոխարէն դրամն նոյն սնտուկէն հատուցանել, սնտուկին այս յաւելեալ ծախուց համար իբրև նոր հասոյթ՝ որոշելով առնուլ օղիի, գինիի և պանիրի օխայէն՝ 1, և մսին օխայէն 2 ղրշ աւելի ։ Նպարավաճառ մը արդէն 300 լիրայի վարձեր է պանիրին յաւելեալ տուրքն ։

— Ադրիանուպոլսոյ մէջ քանի մը հրէայք չարաթ գիշեր մը խաբէութեամբ հրաւիրելով Զախարիա անուն անձին գործակատար Եորկի մասնաճաղն՝ ամառօսեան դէմ պարանով խեղդեր սպաններ, և դիակը պարկով Մերիճ գետը նետել տուեր են ուրիշ անձի մը միջոցաւ ։ Հետևեալ օրն երբ դիակն երևան ելեր է, պարկին գետը նետուիլը տեսնող բայց յայնժամ ինչ լինելը չգիտցող անձ մը ծանուցեր է նետողն, և հետևաբար բռնուեր են ոճրագործք ։

— Սեբաստիոյ գաւառական լրագիրը կը գրէ թէ՝ Սեբաստիոյ բնակիչներէն քանի մը հայագիք, որ ուղևորաց ամենց յուղարկ գնացած լինելով կը դառնան եղեր, քաղաքէն կէս ժամ հեռի տեղ մը յարձակում կրելով իրենց ազգակից Սեբաստացիներէ, մէկ քանին վիրաւորուեր, և չարագործք բռնուեր են ։

— Հալէպի շուկային մէջ Սաբակիրցի Կարապետ անուն անձ մը բռնուեր է՝ կեղծ դրամ շրջաբերութեան հանելու ատեն ։

— Տրապիզոնի նահանգի Չէնկէլ գիւղի մէջ Ալի անուն մարդ մը քրոջն և ուրիշ չորս մարդոց հետ կեռասենիի վրայ ելած կեռաս ուտելու ատեն, ծառը մէջտեղէն կոտրեր, ամէնքն ալ ինկեր, Ալի և քոյրն ամիջապէս մեռեր և միւսներն ծանրապէս վիրաւորուեր են ։

— Սէլանիկի մէջ երեքշաբթի ահագին փոթորիկ մը պատահեր, յորդառատ անձրև տեղացեր, և բնակիչք սարսափեր են ։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ. Պոլիս 29 Յունիս 1891

Օսմանեան Փօնսօլիտէ	20-10
Բումէլիի Երկաթուղի · Ֆրանք	71-25
Թրամուէյ	Լ. Օ. 590-
Օսմանեան լիրան 100 դրուշէն	
Մէճիտիյէ	107-32
Մէթալիք	100-30
Հինգնոց	103-10
Վեցնոց	103-
Բուպլի Թղթադրամ	8-33
Թասֆիյէ	19-20
Ռուսիոյ Բոլ	89-20
Գաղղիական լիրա	87- 3
Անգղիական »	109-32
Դրիմից	51-15

Պատուանշան, Աստիճան, Պաշտօն եւ Պարգեւ ։ – Երկրորդ աստիճանի Մէճիտիյէ պատուանշան՝ Թալլըճայի աւստրիական նախորդ հրամանատար զօրավար Պիլմէքի ։ – Երրորդ աստիճանի Մէճիտիյէ՝ սպարապետութեան դրան ընդհանուր պիտոյից վարչութեան ճիւղի տնօրէնի օգնական Գայմագամ Իսմայիլ պէյի ։ – Չորրորդ աստիճանի Օսմանիյէ՝ Վիէննայի երևելիներէն և արուեստագէտներէն Պ. Մաքս Սալավաչէի ։ – Կարնոյ նահանգի կեդրոնական նայիպ կարգեցաւ Մէհմէտ Վէճիհ էֆէնտի ։ – Դըրգալաճի (Զմիւռնիոյ նահանգ) նայիպ անուանեցաւ Բըլի նախորդ նայիպ Միւքրիմ էֆէնտի ։ – Լեյազաթի ոսկի շքադրամ՝ սպարապետ Ալի Սայիպ փաշայի ։ – Վճռաջինջ դատարանի անդամ կարգեցաւ Պոլսոյ դատարանի անդամներէն Իսմայիլ Նիզամի պէյ ։ – Միրիլիւայի (փաշայութիւն) աստիճան տրուեցաւ՝ Կարնոյ երևելիներէն Մէհմէտ փաշազադէ Ահմէտ պէյի ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

= Գերմանիոյ կայսրն Հոլանտայի արքայական ընտանեկալ թագուհւոյն հետ տեսակցութեան ատեն խօսելով երից կառավարութեանց ծանօթ դաշնակցութեան վերանորոգման վրայ, ըսեր է թէ այդ դաշնակցութեամբ կապահովի Եւրոպիոյ խաղաղութիւնն ։ Եւ յաւելեր է. «Ոչ ոք պիտի համարձակի յարձակիլ մեր վրայ, և մեք ալ և ոչ մէկուն վրայ պիտի յարձակինք ։»

= Հռոմէ լուր եկած է թէ՝ Իտալիոյ կառավարութիւնը, երից դաշնակցութեան վեցամեայ վերանորոգութեան գիրն ստորագրելու ատեն ուրիշ պայմանագիր մ'ալ ստորագրեր է, որով՝ Գերմանիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ կառավարութիւնք կը պայմանեն մէկմէկու յանձնել քաղաքական, լրագրական, վատութեան և մենամարտութեան յանցանօք ամբաստանեալներն, և թոյլ չտալ որ մէկմէկու երկրի մէջ բնակին իրենց զինուորական ծառայութեան շրջանը չաւարտող մարդիկ ։

= Գորֆուի մէջ հրէից վրայ յարձակող մարդոց դատը կը շարունակուի ։ Մինչև ցարդ 20 հոգի բանտարկութեան դատապարտուեր են, առ առաւելն՝ 6 ամիս պայմանաժամով ։ Դատապարտելոց մէջ ոստիկանութեան պաշտօնեայք ալ կան եղեր ։

= Փարիզէ կը հեռագրեն թէ Չինաստանի մէջ ընդդէմ Եւրոպացւոց յուզմունք կը շարունակուին, և որովհետև Չինաց կայսեր հրամաններն ազդեցութիւն չեն ըներ, դեսպանք կը միաբանին՝ միահամուռ ձեռնարկութիւն մ'ընել անկարգութեանց առաջքն առնլու համար ։

= Ճաբոնի նախարարութիւնն ազգային խորհրդարանէն կը պահանջէ 235 միլիոն ֆրանք, նոր մարտանաւուց շինութեան համար ։ Ճաբոն արդէն բաւական ծովային զօրութիւն ունի, սակայն գոհ չլինիր և կը ջանայ աւելցունել ։ Այս ջանքերն ո՛չ նուազ ուշադրութիւն կը գրաւեն Անգղիոյ և Ամերիկայի մէջ ։

= Անգղիոյ արտաքին գործոց նախարարի խորհրդականն ազգային ժողովին մէջ ըսեր է թէ՝ ինքն տեղեակ չէ երից կառավարութեանց դաշնակցութեան տրամադրութեանց և չունի Իտալիոյ նախարարապետին յայտարարութեանց պաշտօնական գիրն, բայց պէտք է ապահով լինել թէ Անգղիոյ կառավարութիւնն ի հարկին ըստ առաջնոյն պիտի ջանայ հարկաւոր միջոցներն ի գործ դնել՝ Միջերկրականի այժմեան վիճակին պահպանութեան համար. և թէ՝ յիշեալ դաշնադրութեան վերանորոգման ժամանակ թէև Անգղիոյ հետ բանակցութիւն տեղի ունեցած է, սակայն Անգղիոյ կառավարութիւնը բնաւ փոխած չէ 1888 ի ընթացքն. և թէ՝ ներկայ նիզակակցութիւնն և ոչ մէկ տէրութեան դէմ չէ, և ինքն ծանօթութիւն չունի եւրոպական ընդհանուր միաբանութեան մը վրայ, բայց ի ծանօթ դաշնակցութենէ՝ որոյ նպատակն է պահպանութիւն արդի վիճակի ։

= Գարատաղի իշխանը գահաժառանգին հետ ի Թրիէստ ուղևորեր է՝ Աւստրիոյ կառավարութեան կողմանէ իւր տրամադրութեան ներքև եղած Անտրէաս Հօֆէր մարտանաւով ։

= Պուխարայի էմիրն առաջիկայ հոկտեմբերի մէջ բազմաթիւ պարագայիւք Պետրպուրկ պիտի գայ, և ի բացակայութեանն ռուսական զօրքը պիտի հսկէ Պուխարայի ։

= Ռուսիոյ կառավարութիւնը պատուիրեր է երկաթուղեաց վարչութեանց՝ ցորենը թեթև վարձքով փոխադրել ա՛յն տեղերն, որոց բերքը գոհացուցիչ վիճակի մէջ չերևիր ։

= Գերմանիոյ կայսրն ի Հոլանտա վերջին այցելութեանն ատեն խոստացեր է Հոլանտայի կառավարութեան՝ երկրին ամբողջութեան ու չահուց պաշտպան կանգնիլ, և Հոլանտա ալ փոխադարձաբար՝ չէզոք մնալ ի հարկի պատերազմի ։

= Գերմանիոյ կայսրն, Իտալիոյ նախարարապետ և արտաքին գործոց նախարար Պ. Ռուտինիի՝ Էկլ Նուար, և արտաքին գործոց նախարարի խորհրդականին՝ Էկլ Բուժ պատուանշան ընծայեր է ։

= Ովկիանիայի մէջ Սպանիոյ կառավարութեան սեպհական Մանիլ կղզեաց կեդրոն Մէնտանաօթի մէջ 1000 ի չափ սպանիական զօրք՝ հետևակ, թնդանօթաձիգ և ծովային, ջարդուեր են 5000 ի չափ բնիկներէ, որք անտառի մը մէջ դարաներ են եղեր ։

= Իտալիոյ գահաժառանգ իշխանը Պավիէրայի արքային դստեր հետ պիտի նշանուի եղեր ։

= Ամերիկայի Չիքակոյի տիեզերական Արուեստահանդէսին մէջ իգական սեռի ձեռագործոց և գեղարուեստից յատուկ մեծ շէնք մը պիտի գտնուի ։ Ռուսիոյ կառավարութիւնն ալ ընդուներ է ի պաշտօնէ մասնակցիլ այս Արուեստահանդէսին, և Գաղղիոյ կառավարութիւնն 3 միլիոն ֆրանք յատկացուցեր է մասնակցութեան ծախուց համար ։

= Պուլղարիոյ նախորդ իշխանն՝ որ հիւանդացած էր և ծանր ու վտանգաւոր վիճակի մէջ կը համարուէր, սկսեր է ապաքինիլ ։

= Հելլենական զրահաւոր մարտանաւ մը Բիրս հանդիպելով Սամոս կղզին գնացեր է ։

= Նիւ-Եօրքի լրագրաց մին հետևեալ հնարքով աւելցուցեր է ընթերցողներն ։ 2000 ի չափ տղայոց խնճոյք տուեր է քաղաքապետութեան պարտիզին մէջ. տեսակ տեսակ ընտիր կարկանդակներ, շաքարեղէններ և առատ ըմպելիք բաշխեր է ։ Տղայքը տուն վերադառնալով՝ տարապայման գոհութիւն յայտներ են, և հետևեալ առաւօտ քաղաքին համայն տղայք լրագրէն մէկ մէկ հատ գներ, և նոյն խնճոյքին օրէն սկսեալ ստուարացեր է լրագրին ընթերցողաց թիւն ։

= Օտէսսայէն հեռագրեր են թէ՝ Փիէվի, Բոտոլիոյ և Վօլինի նահանգաց կուսակալք ի պաշտօնէ յայտարարած են թէ Ռուսաստանէ պիտի արտաքսուին այն օտարականք, որ որոշեալ ժամանակի մը մէջ ռուսական հպատակութիւնը չեն ընդունիր։ Այս որոշման նպատակն է եղեր մերժել նահանգներէն հանել գերմանական հպատակներն։

= Ռուսիոյ կայսեր և կայսրուհւոյն ամուսնութեան 25 րդ տարեդարձի հանդէսն թէև ի Դոբէնհակ տեղի պիտի ունենար, բայց ըստ վերջին որոշման պիտի կատարուի Պետրպուրկի մէջ առաջիկայ Հոկտեմբերի 28 ին, ի ներկայութեան կայսերական տան ազգական մեծամեծաց, որք են Յունաստանի՝ Տանիմարքայի և Վիրթէմպէրկի թագաւորք և թագուհիք, Էտիմպուրկի դուքսն ու դքսուհին, Փարատագի իշխանն և այլք։

= Գերմանիոյ կայսրն ու կայսրուհին՝ ի Հոլանտա այցելէլ ետքը, ուր արքունեաց և ժողովրդեան կողմանէ շատ փառաւոր ընդունելութիւն եղաւ, - անցեալ շաբաթ օր յԱնգղիա մտան մեծաւ փառօք և հանդիսիւ։ Դահաժառանգ իշխանն և այլ մեծամեծք ընդ առաջ ելան։

= Աւստրիոյ կայսրն պիտի այցելէ մօտերս առ արքայն Իտալիոյ ի Հռոմ։

= Կը հաւաստեն այն լուրը թէ՝ Ռուսիոյ կայսրուհին գահաժառանգ որդւոյն հետ ի Փարիզ պիտի այցելէ գաղղիական Նաւատորմին Բրոնշթատէ ելնելէ ետքը, և թէ՝ Պետրպուրկի կայսերական պալատան վերատեսուչն կանխաւ պիտի երթայ Փարիզ և պէտք եղած պատրաստութիւններն ընէ։

= Պարսից կառավարութիւնն ալ որոշեր է ի պաշտօնէ մասնակցիլ Զիքակօյի տիեզերական արուեստահանդիսին, և այս որոշումն հաղորդեր է Միացեալ Նահանգաց կառավարութեան։

= Պօնա-Հէրսէք քաղաքի շատ կողմերը երկուշաբթի գիշեր ուժգին գետնաշարժ մը պատահելով՝ հինգ րոպէ տևեր է։

= Ամերիկայի մէջ քանի մը շաբաթ յառաջ հրատարակուելով թէ մեծ գումար մը պարգև պիտի տրուի եօթն օր շարունակ անքուն մնացողին, - 6 հոգի ելեր են այս պարգևն ստանալ։ Ոքս տեղ մը նստեր են քանի մը անձանց հսկողութեամբ։ Չորսը չորս օր անքուն մնալ կցեր են. հինգերորդն վեց օրէն ետքը սկսեր է քնանալ. վեցերորդն մինչև սահմանեալ ժամանակն անքուն մնալ յաջողեր է, բայց պարգևն իսկ ստանալու չսպասելով՝ խոր քնոյ մէջ մտեր և սկսեր է խորդալ։ Թևերէն և ոտքերէն բռնելով մերձակայ թատրոնի մը բեմն հաներ են, սակայն դարձեալ չէ արթնցեր խեղճը, և երբ բաւական ժամանակ ետքը արթնցեր է՝ կչռեր տեսեր են որ մարմինը շա՛տ նիհարցած է։

= Օտէսսայի մէջ և շրջակայքն վերջին օրերս տարապայման ջերմութիւն կը տիրէ, և երկիւղ կայ թէ ամառային բերքերն պիտի այրին չորնան, եթէ ջերմութիւնը ժամանակ մ'ալ շարունակէ և անձրև չտեղայ։

= Պէրլին-Միւնիխ երկաթուղւոյ գծին վերայ շոգեկառաց կառավան մը գծէն դուրս ելնելով՝ կին մը մեռեր, և 12 հոգի վիրաւորուեր են, 6 ը՝ ծանր։

= Սէրնէ քաղաքի մէջ (Ալզաս-Լորէն) անցեալ հինգշաբթի գիշեր հրդեհ պատահելով, բրդեղէնից գործարան մը շրջակայ վաճառատուններով այրեր են, և 1 միլիոն ֆրանքի վնաս եղեր է։

= Մատրիտի մէկ բազմաբնակ թաղի մէջ ալ գիշեր ատեն հրդեհի դէպք մը տեղի ունենալով՝ 3-4 ժամ տևեր, բազմաթիւ շէնքեր մոխիր դարձեր և 15 հոգի ծանրապէս վիրաւորուեր են։ Տատոններու բնակիչք պատուհաններէն վար նետուեր են՝ բոցերէն ազատելու համար։

= Չարլսթոնի մօտերը (Ամերիկա) շոգեկառաց կառավան մը կամրջի մը վրայէն անցնելու ատեն, կամրջին մէկ ոտքը փլեր, կառավանը 30 ոտք բարձրութենէ գլորեր, 13 հոգի մեռեր և 58 հոգի վիրաւորուեր են։

= Թէհրանէ Յունիս 22 թուով հեռագրեալ է թէ՝ մարախն բնաջինջ ըրաւ Խորասանի նահանգաց բերքն, և արգելուեցաւ ցորենոյ արտածութիւնը։

= Նիժնի-Նովկորոտի (Ռուսաստան) կուսակալն արտաքսեր է երկու մեծ վաճառական, ստուգելով թէ ցորենին գինը բարձրացունելու նպատակաւ ջանահնար կը լինին։

ՈՒԽՏԸ

Մանկութեան յիշատակ մ'է, զոր ձեզ պիտի պատմեմ սիրելի բարեկամ. մտացս մէջ խորապէս փորագրեալ յիշատա՛կ մը՝ զոր չեմ կարող զարթուցանել առանց մտածելու սիրելեացս վերայ, որք երկար ատենէ ի վեր կը քնանան իւրեանց վերջին քունը հին եկեղեցւոյն մերձակայ փոքր գերեզմանատան մէջ։ Մանչի եզերաց մի փոքր գիւղի մէջ մեծցած եմ։ Այժմ հանրածանօթ ծովեզերք մ'է, ուր կը յաճախեն Փարիզցիք ամէն տարի։ Յայնժամ մի փոքր գիւղակ մ'էր. մէկ քանի տնակք, եկեղեցին, երիցատունն և միւսներէն մեծ տուն մը, զոր դղեակ կը կոչէին, կար։ Բնակիչք՝ ամենքն ալ նաւազ, ամառը ձկնորսութիւն կընեն ի ծովեզերս. ձմեռը կերթային ի Հավր, ի Տիէբ, ի Ֆէքան մեծ նաւերով մեծ ձկնորսութիւն ընել։ Միահամուռ կերթային, և ձկնորսութեան եղանակը լմնալէն ետքը՝ կը դառնային բերելով առ կանայս իւրեանց դառն աշխատութեան արդիւնքն։ Ա՜հ, տօնի օր մը կը լինէր նաւազաց վերադարձի օրը։ Իբր ի կիւրակէի Պատարագի կերթային, զոր ծեր երէցը կըմատուցանէր ի շնորհակալութիւն և ի փառաբանութիւն առ Աստուած, որ հաճած էր վերադարձնել ի գիւղ բոլոր թեմականներն։ Երեկոյին խնձորօղիի շիշեր կը քամէին և իւրեանց գեղջուկ լեզուաւ կը պատմէին իւրեանց արկածները, փոթորիկները, ցուրտը, նեղութիւններն և վտանգները։ Ձմեռն տրանց բացակայ եղած գիշերները բոլոր կանայք կը հաւաքուէին թիեր, ճանկաձողեր, խորշաւոր դարաններ և ձկնորսութեան գործիքներ պարունակող տեսակ մը համբարանոց եղող մեծ սրահի մը մէջ։ Ոմանք կկարկտէին պատի վերայ կախուած ուռկաններ, այլք՝ յարդալից տոպրակներու վերայ կծկած՝ տանթէլ կը հիւսէին, և բացակայից վերայ կը խօսէին։ Բայց դժնդակ օդերու ատեն, երբ հիւսիսային արևելեան կողմէն սաստիկ հով կը փչէր, երբ ալեաց միաձայն աղաղակին տեղ մեծ ալեաց շառաչիւնն և կատաղի ծովուն մնչիւնը կը լսուէր, միայն տանթէլ չինելու գործիքներուն շառաչիւնը կը վրդովէր լռութիւնը։ Կը մտածէին թէ հեռուն ծովը փոթորիկ կար։

Այն նաւազաց մէջ կար մէկն՝ առ որ մտաւոր սէր մ'ունէի։ Երկար ատեն ծովային զինուորութիւն ըրած, և ըստ իւր բացատրութեան՝ բոլոր ծովերը կոխոտած էր. համայնք կըգտայի երբ պատմէր իւր ճանապարհորդութիւններն. հարիւր անգամ պատմած էր ինձ կուտէլուրի երկրաչափին սպանութիւնը, և խօսելով Տահիթեան գեղեցիկ նաւերու կազմածքը կը նկարագրէր ինձ։ Հայր Ֆիլիպ կը կոչէինք զնա, թէպէտ դեռ երիտասարդ էր։ Նորա կինը՝ Նանէթ՝ մի ճշմարիտ Նորմանտուհի, ամառական բամպակեայ գլխարկը միշտ կրող, մայրենի գորով մ'ունէր առ իս, և իւր ութ զաւակաց հանդէպ սատար կը սիրէր։ Տարի մը, կարծեմ՝ 1856 ին էր, նաւազք սովորականէն աւելի երկար ատեն բացակայ մնացին. Մանչի վերայ յուսահատական տևականութեամբ անձրև կը տեղար։ Ամէն օր ձկնորսաց վերադարձին կըսպասէին. բայց օրերը կանցնէին առանց մարդ մը տեսնելու մեծ ծովերէն ի գեղ տանող զառիվայրին վերայ, տապրակ մը շալկած, երգ իրան և բրդէ գլխարկներն երերցնելով։ Վերջապէս կիրակի օր մը եկեղեցին ելնելու ատեն, նաւազք երևցան զառիվայրին վերի ծայրը. սակայն չէին երգեր. բոլոր կանայք ընդ առաջ նոցա վազելու ատեն կանգ առին. հեռուէն տեսած էին որ մէկը պակաս է. վարկեան մը սրտաձմլիկ յուզմունք տեղի ունեցաւ. արդեօք սոյն դժբաղդունեաց ո՞րը պիտի այրիանայր. ապշութեամբ խարխս երես կը նայէին. նաւազք կը մօտենային. կին մը՝ իւր այրը, մայր մը՝ իւր որդին, աղջիկ մը՝ իւր նշանածը տեսածին պէս կը վազէին գիրկընդխառնիլ։ Միայն Նանէթ կանգնած էր անշարժ. չկար իւր Ֆիլիպ։ Նաւազաց խումբը մօտենալուն պէս Նանէթ իւր հօրեղբօրդին խմբին երիցագոյնը Ժան-Լուին հարցափորձեց։

— Ո՞ւր է Ֆիլիպ։

— Ֆիլիպ, պատասխանեց Ժան-Լուի, մեր նաւուն հետ ծած չէր. Մարի-Ժան անուն նաւուն մէջ էր, և երբ մեք թողինք զՖէքան, Ֆիլիպ դեռ եկած չէր։

Նանէթ սլլագունեցաւ։

— Ըսէ ինձ, ո՞ւր է ամուսինս. դու գիտես... ապահով եմ թէ մեռած է։

— Ինձ մտիկ ըրէ, Նանէ՛թ, Հոկ հրուանդանն անցնելու ատեն սաստիկ մրրիկ մը ելաւ, մեր նաւերը մէկմեկէ կընթանային, տեսայ զՄարի-Ժան որ փոթորիկէն կը փախչէր. փոթորիկին վերջը չտեսայ. հաւանական է որ նաւահանգստի մը մէջ ապաստանած է։

Նանէթ չպատասխանեց. քաշեց տարաւ զաւակներն և վազեց փակուիլ տանը մէջ։ Տխուր օր մը եղաւ ի գիւղն, և չտօնեցին նաւազաց վերադարձն։ Երկու օր վերջը գիւղապետը Ֆէքանէն նամակ մը ընդունեցաւ ծանուցանող թէ Մարի-Ժան ընկղմած է նաւազօք և բեռամբք. երկայմ նաւ մը գտած է ծովուն բաւցերը Մարի-Ժանի խելաց մէկ տախտակը՝ Մարի-Ժան անունը կրող։ Պէտք եղաւ իմացնել խեղճ կնոջ թէ այրիացած է. զաւակացն՝ թէ ա՛լ հայր չունին։ Ծերունի երէցն յանձն առաւ կատարել սոյն պաշտօնը։ Նանէթ մտիկ ըրաւ լռիկ մնջիկ, առանց շրթունք մը արտասանելու, առանց արտօսր մը թափելու։ Նանէթ ա՛լ տունէն դուրս ելաւ։

— Ո՞ւր կերթաս, հարցուց քահանայն։

— Ծովը կերթամ ամուսնոյս ողջ, պարոն երէ՛ց, պէտք է որ ան խոր դարձնէ զնա մեռեալ. պիտի երթամ ծովէն պահանջել Ֆիլիպիս մարմինը։ Մնացեալն՝ յաջորդով

ՏԱՐՐԵՐՔ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ
ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ
Ի Ս. Թէրզեանէ

Ֆրանսերէնէ ի Հայ թարգմանութեան դասագիրք, որ դիւրըմբռնելի եղանակաւ կուսուցանէ Ֆրանսերէն լեզուի քերականութեան առաջին մասին ամենակարևոր կանոններն ու սկզբունքները։ Յատկապէս պատրաստուած է ներկայ դպրոցական շրջանին համար։ Կը պարունակէ ընտիր հատուածներ և բարոյալից վէպեր։ Իւրաքանչիւր հատուածի գլուխ դրուած են բառից համապատասխան նշանակութիւնք և ոճերու բացատրութիւնք։ Գին՝ 3 ղրուշ. դպրոցաց համար % 25 զեղչ։ Կը գտնուի հեղինակին է Մէրճան փողոց թիւ 33 Աչճեան գրատունը։

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ՆՈՐ
ԲԱՌԱԳԻՐՔ
ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Յորում կը բովանդակին 30000 բառք, ոճք, նորաբանութիւնք, գաւառական բառք, գիտականք, արհեստականք, դիցաբանականք եւայլն եւայլն։

Այս ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐՔՆ նորաձոյլ տառերով և ընտիր տպագրութեամբ սկսուած է հրատարակուիլ, որ պիտի լրացնէ դասական գործոյ մի գլխաւոր պէտքն։

Այս նոր բառագիրքն ըստ կարելւոյն իւր ձևի պարունակութեամբը խիստ օգտակար պիտի լինի բազմաց, յորս դասին ուսուցիչք, ուսանողք և առ հասարակ գրական ճիւղին աշխատողք։

Սորա մէջ պիտի գտնուին նախնեաց լեզուի ամենէն գործածական բառերն ու ոճեր, ի հարկին իրենց նոր առումներովը ու համանշանակներով։

Նոր բառագիրքն՝ օգտուելով բաց ի Հայ բառագրքերէ, գլխաւորապէս Նորայր Բիւզանդացւոյ Գաղ. է ի Հայ ընդարձակ բառարանէն, նոյնպէս և այլ հոյակապ նոր հրատարակութիւններէ, յաջողած է պարունակել՝ ցարդ Հայ բառագրքերէ դուրս գտնուած մի քանի հազար բառեր, ինչպէս նաև քերականական կանոնաց կարևոր ամփոփում մի։

Նոր բառագրքիս առաւելութիւններէն մին է նաև ճարտար եղանակաւ մը նշանակել շատ մի բառերու արմատներն և նոյա ածանց ու բարդ բառերն։

Ամբողջ գործն պիտի բաղկանայ 40 թերթերէ։

Բաժանորդագրութեամբ սկսուած է հրատարակուիլ. բաժնեգինն է իւրաքանչիւր օրինակի համար 15 դահեկան։

Գրատուներէն դրոշմաթուղթ ալ կընդունուի։

Դիմել առ հեղինակն, Կ. Պոլիս, Էսկի Զապթիյէ, Պապը Ալի Ճատտէսի, Պէրպէրեան Նշան Էֆէնտիի Տպագրատունն։

Առաջին թերթն ձրի կը տրուի։

ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ
ԹՈՒՐՔԵՐԷՆԷ Ի ՀԱՅԵՐԷՆ
Յօրինեալ ի Մ. Ա. Գասպարեանէ

Այն թուրքերէնէ ի հայ բառարանն՝ որ 200 ի մօտ երեսներէ կը բաղկանայ, բառերու յստակ բացատրութեամբն և ոճերովն՝ թէ՛ ազգային վարժարանաց ուսանողաց և թէ՛ թուրքերէն լեզուի հետամուտ ամէն դասակարգի ազգայնոց յոյժ պիտանի և օգտակար կրնայ ըլլալ։ Գին 6 ղրշ։ Դպրոցաց համար մասնաւոր զեղչ։ Կը վաճառի Մէրճան փողոց թիւ 33 Աչճեան գրատունը։ Գաւառներէ փափաքողք վերոյիշեալ հասցէիւ 6 ղրշի փուլ ղրկելով կրնան ստանալ։

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ
ԿԱՄ
ԱՌԱՋՆՈՐԴ
ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼ ԱՆՁԱՆՑ
Գրեց
ՏՕՔ. Է. ՊԼԷՄԱՆ
Բժշկական համալսարանին Բարիզու
ՏՊԱԳՐ. Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ
Հրատարակիչ Մ. ՔԱԼՓԱՔՃԵԱՆ
Թարգմանիչ [illegible]
Գին 5 Ղրշ.

Ֆրանսայի բժշկական համալսարանէն՝ համբաւաւոր Տօք. Պլէմանի սոյն հետաքրքրաշարժ եւ ընտիր երկասիրութիւն՝ հայերէն մաքուր աշխարհաբարի թարգմանուած, բարոյական բազմաթիւ դասերով արդարեւ թանկագին ծառայութիւն մը պիտի մատուցանէ այն ամէն անձանց, որք ամուսնական խորհրդաւոր կենաց մէջ մտնելու մտադիր են եւ կամ մտած, նաեւ գիտական նոր ճշմարտութիւններով պիտի ցուցնէ թէ՝ ապագայ ամուսինք ինչ պարտին գիտնալ իրենց ամուսնութեան նախընթաց օրը, եւ այնուհետեւ. նաեւ՝ թէ ո՛յք են այն անմիջական դարմաններն, հարկաւո՛ր՝ կատարելապէս բուժելու ամուսնական հակառողջապահիկ զեղծմանց տխուր եւ ցաւալի հետեւանքները։

Կեդրոնատեղին է Զարդարեան գրատուն, կը գտնուի նաեւ բոլոր Հայ գրավաճառաց քով։ Գաւառներէ կամ օտար երկիրներէ յանձնարարութեանց համար փափաքողք կրնան մէն մի օրինակի համար 6 ղրշի. Տճ. Դղ. Անգ նամակի թուղթ ղրկել մեր հասցէին,

Մ. ՔԱԼՓԱՔՃԵԱՆ Սուլթան-Համամ, Կ. ՊՈԼԻՍ — 12 — M. KALPAKDJIAN Sultan-Hamam, CONS/PLE

PILULES HOLLOWAY
ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, և ամեն ջղային ակարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի. արիւնը մաքրելով՝ նորա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ և դրդբելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որոնցմէ մէջ ցաւած կաղեր, գլխի ցաւեր կմնէր մարսողութիւնը կչափաւորի, և մարմինը մաքրելով բոլոր այն աղտեղութիւններէ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ՝ ուժեղ և բնական վիճակը կդնէ։

ONCUENT HOLLOWAY
ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւն և վէրք բուժելու մասին ունեցած պալսամական յատկութեանցը չհաւասարիր ընաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (շիրփէնճէ), սրունից և ոտեանց վէրքեր կա՛մ բոլորովին կանցնին և կա՛մ կլաւանան. օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւանդ յօդացաւ (եէլ) բուսած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապաքինիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պաղչէ-գաբու Թաշ-խանի կողմերը Փ. Գասպարեանի դեղարանը, Թիւ 7, կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տօքթօր Հոլլօուէ, ի Լոնտոն Օքսֆօրտ փողոց Թիւ 533։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Օ. ԱԼԱՃԱՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԱՊԵՏ ՊԻՊԵՐԵԱՆ
Կ. Պոլիս Չիչէք-բազար Թիւ 23